ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԳՆ-ԲԸԱՀԾՁԲ- ՓՓՊՁ-25

ք. Երևան «2» 05 2014 թ.

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Կիրակոսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ն, ի դեմս Կազմակերպության տնօրենի ժ/պ Ա. Ավագյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանել անպայտման որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը.

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 27 460 800 (քսանյոթ միլիոն չորս հարյուր վաթսուն հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման՝ գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պայմանագրի գնի 100 %-ը 27 460 800 (քսանյոթ միլիոն չորս հարյուր վաթսուն հազար ութ հարյուր) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 %-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 %-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3.1 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանված է ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 24-ի N 186-Ա հրամանով:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկայի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ

գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած 4 էջից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	<<Անասնաբուժասանիտարիայի,
Ք. Երևան, Կառավարական N 3 շենք	սննդամթերքի անվտանգության և
ՀՀ ֆինանսների նախարարության	բուսասանիտարիայի ոլորտի
աշխատակազմի	ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ
Գործառնական վարչություն	Ք. Երևան, Մամիկոնյանց փ. 39 Ա
Հ/Հ 900011008902	Հայեկոնոմբանկ Արաբկիր մ/ճ
ՀՎՀՀ 02508046	Հ/Հ 163058800489
Աշխատակազմի ղեկավար	ՀՎՀՀ 00422412
	Տնօրեն՝ Ժ/պ՝
_____ Ա. Կիրակոսյան	_____ Ա. Ավագյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«6» 05 2014 թ. կնքված
N ՀՀ ԳՆ - ԲԸԱՀԾՁԲ-ԲԲԾՁԲ-25 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների անվանումը	Տեխնիկական ցուցանիշները
1	2
Ֆերոմոնային թակարդների կիրառմամբ կարտոֆիլի ցեց և լոլիկի ականող ցեց վնասատուների զարգացման մոնիթորինգի իրականացում	Մոնիթորինգը իրականացվելու է՝ ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերի 2000 հա կարտոֆիլի դաշտերում և 7500 լոլիկի, տաքդեղի սմբուկի դաշտերում, սածիլանոցներում և դրանց հարակից տարածքներում, ամբողջ վեգետացիայի ընթացքում: Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզերի շուրջ 2000 հեկտար կարտոֆիլի ցանքերում կտեղադրվեն՝ 400 հատ (5 հա հաշվով մեկ թակարդ) կարտոֆիլի ցեցի ֆերոմոնային թակարդ, լոլիկի, սմբուկի, տաքդեղի սածիլանոցներում, դաշտերում և դրանց հարակից մոլախոտերով վարակված շուրջ 7500 հեկտար տարածքներում՝ 2500 (3 հա հաշվով մեկ թակարդ) լոլիկի ականող ցեցի թակարդ: Կարտոֆիլի դաշտերում, կարտոֆիլի ցեցի ֆերոմոնային թակարդներում ֆերոմոնով գլխիկները վեգետացիայի ընթացքում պետք է փոխել 3, իսկ սոսնձաթուղթը՝ 6 անգամ: Լոլիկի, սմբուկի, պղպեղի սածիլանոցներում, դաշտերում և դրանց հարակից՝ մոլախոտերով վարակված տարածք-ներում՝ լոլիկի ականող ցեցի թակարդներում ֆերոմոնով գլխիկները պետք է փոխել 5, իսկ սոսնձաթղթերը՝ 10 անգամ: Մոնիթորինգը իրականացնել 6-7 օր պարբերականությամբ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
Ք. Երևան, Կառավարական N 3 շենք
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի
Գործառնական վարչություն
Հ/Հ 900011008902
ՀՎՀՀ 02508046
Աշխատակազմի ղեկավար

------------------ Ա. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Անասնաբուժասանիտարիայի,
սննդամթերքի անվտանգության և
բուսասանիտարիայի ոլորտի
ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ
ք. Երևան, Մամիկոնյանց փ. 39 Ա
Հայէկոնոմբանկ Արաբկիր մ/6
Հ/Հ 163058800489
ՀՎՀՀ 00422412
Տնօրենի ժ/պ

------------------ Ա. Ավագյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«8» 05 2014 թ. կնքված
N ՀՀ ԳՆ - ԲԸԱՀԾՁԲ-14/1-25 պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝
Իրականացվող ծրագիրը՝ ____01 ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ

Բաժին 11, խումբ 01, դաս 01

Ծրագրի իրականացնող
հիմնարկի անվանումը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Հասցեն՝ Կառավարական տուն 3

Գնման ենթակա ծառայությունների անվանումը	Չափի միավորը	Միավորի գինը (հազ. դրամ)	Նախատեսվում է գնել 2014 թ. Ըստ եռամսյակների			Ընդամենը
			II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ 1-ը նոյեմբերի	գումարը (հազ.դրամ)
Վնասատուների դեմ պայքարի ծառայություններ	դրամ	27460.8	1	1	1	27460.8
ԸՆԴԱՄԵՆԸ		**27460.8**				**27460.8**

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
Ք. Երևան, Կառավարական N 3 շենք
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
Գործառնական վարչություն
Հ/Հ 900011008902
ՀՎՀՀ 02508046
Աշխատակազմի ղեկավար
-------------------- Ա. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

<<Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ
ք. Երևան, Մամիկոնյանց փ. 39 Ա
Հայէկոնոմբանկ Արաբկիր մ/ճ
Հ/Հ 163058800489
ՀՎՀՀ 00422412
Տնօրենի ժ/պ՝
-------------------- Ա. Ավագյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
«2» 05 2014 թ. կնքված
N ՀՀ ԳՆ - ԲԸԱՀԾՁԲ-14/7-25 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝
Իրականացվող ծրագիրը՝ ____01 22 կառավարության պահուստային ֆոնդ

Բաժին 11, խումբ 01, դաս 01

Ծրագրին իրականացնող
հիմնարկի անվանումը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
Հասցեն՝ Կառավարական տուն 3

Գնման ենթակա ծառայությունների անվանումը	Չափի միավորը	Հոդված	Նախատեսվում է վճարել 2014 թ. Ըստ եռամսյակների			Ընդամենը
			II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	գումարը (հազ.դրամ)
Վնասատուների դեմ պայքարի ծառայություններ	դրամ	4241	27460.8	27460.8	27460.8	27460.8
ԸՆԴԱՄԵՆԸ						**27460.8**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
Ք. Երևան, Կառավարական N 3 շենք
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
Գործառնական վարչություն
Հ/Հ 900011008902
ՀՎՀՀ 02508046
Աշխատակազմի ղեկավար
________________ Ա. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ
ք. Երևան, Մամիկոնյանց փ. 39 Ա
Հայէկոնոմբանկ Արաբկիր մ/ճ
Հ/Հ 163058800489
ՀՎՀՀ 00422412
Տնօրենի ժ/պ՝
________________ Ա. Ավագյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 4
«3» 05 2014 թ.կնքված
N ՀՀ ԳՆ-ԲԸԱՀԾՁԲ-ԱՖՄԼ-25 պայմանագրի

Կատարող	Պատվիրատու
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Կատարողը ի դեմս_____,
հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.